«ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖՈՒՏԲՈԼԻՍՏ» ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. «Տարվա լավագույն ֆուտբոլիստ» անվանակարգում քվեարկությանը կարող են մասնակցել

ՁԼՄ-ների ներկայացուցիչները և Fastex Պրեմիեր Լիգայի 2025-2026թթ. մրցաշրջանի մասնակից ակումբները

2. «Տարվա լավագույն ֆուտբոլիստ» անվանակարգում ցուցակի մեջ ընդգրկվում են՝

Օրացուցային տարվա ընթացքում Հայաստանի ազգային և տարբեր տարիքային հավաքականներում, ինչպես նաև իրենց ակումբներում, այդ թվում՝ արտերկրում, առավել աչքի ընկած հայաստանցի ֆուտբոլիստները, որոնց թեկնածությունն առաջադրվում է ՀՖՖի կողմից:

3. Քվեարկողներին առաջարկվում է վերը նշված սկզբունքով կազմված ֆուտբոլիստների ցուցակը, ՈՐՈՆՑԻՑ ՊԵՏՔ Է ԸՆՏՐԵԼ ՄԻԱՅՆ ՄԵԿԻՆ

Ակումբների ներկայացուցիչները չեն կարող քվեարկել մրցաշրջանի ընթացքում/ տվյալ պահին իրենց ակումբը ներկայացրած/ներկայացնող թեկնածուի օգտին: Քվեարկությունը պետք է ուղարկել thebest@ffa.am էլհասցեին՝ նշելով քվեարկության տարբերակը, անուն-ազգանուն, լրատվամիջոցի անուն, կցելով լրագրողական բեյջը:

4. «Տարվա լավագույն ֆուտբոլիստ» մրցանակին կարժանանա ամենաշատ ձայն ստացած խաղացողը և կպարգևատրվի «Տարվա լավագույն խաղացող» մրցանակով: